№ 35 — 1878 ԹՎԱԿԱՆ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ — № 35

ՄԵԳՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՆ 10 ՄԻԶՈՑ ՏԱՐԻՆ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ։
Գայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ր.
Ստարաբաղաբացիք պիտում ենուղղակի Въ редак. газеты „Пчела Армянъ“.

ԹՈՒՂԹԱՏԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցը ստացել է "Արևելեան Մամուլ", մայիս և յունիս ամիսների առանձին առանձին համարները, որոնք ուղարկուած են բաժանորդներին, օրերումն կ'ստանամ յուլիս ամսուայ №—ը. նոյնպէս նամակաւ հաղորդել են որ օգոստոս ամսուայ №—ն էլ ուղարկելու են չուտով։ Հրաւիրում ենք ցանկացողներին ուղարկել 8 ռուբլի և ստորագրուիլ այդ օգտակար ամսագրին։

Զ. Գրիգորեանց

Խմբագրութիւնս խնդրում է, այն բաժանորդներին, որոնք դեռ և վճարած չեն իրենց նեկայ ամի բաժանորդագինը բարհաճին այն հասուցանել նորան։

ԹԻՓԼԻՍ 9-ԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Վերջին ժամանակ Ռամկահայաստանը չափազանց են զանազան յանձնաժողովներ, պաշտօնական թէ մասնաւոր, մինչև անգամ մասնաւոր անհատներ աշխատում ձիշդ տեղեկութիւններ, որքան միջոց և հնար ունին, նորա մասին հաւորդելու. որովհետև լինելիք յեղափոխութիւնը պէտք է հիմնվին տեղագրական պայմանների վերայ։ Այդ յեղափոխութեանց համար մեծ նշանակութիւն է արվում բնակիչց թիւերին, թէ որ ազգաբնակութիւնն ուր աւելի բազմաթիւ է։ Տարակոյս չկայ, որ վերջ ի վերջոյ այդ ձիշդ տեղեկութիւնները հանդիսս կ'գան և ըստ այնմ կվճռին յեղափոխութիւնք Ռամկահայաստանում։ Եթէ Ռամկահայաստանը չի ստանալ այն ամենն, ինչ որ ցանկանում էին նորա համար մեր Ռամկաբնակ եղբարք, դորա գլխաւոր պատճառներից մեկը կարող է համարվել այն հանգամանքն, որ Ռամկահայաստանի հայերն չգուշակելով ներկայ հանգամանքներն անդադար ամեն առիթ գտնելիս թողնվ են իրանց հայրենիքն ու գաղթել և այդպես Ռամկահայաստանը հայաթափուր են արել։

Հայոց խնդիրն ամեն Հայի սրտին ապրող մի խնդիր էր. ամեն Հայ ջերմ սրտով հանկրում էր և ցանկանում նորա բարեյաջող վճռին։ Այս խնդիրը վարել յանձնած էր Կ. Պոլսոյ սրբազան ներսէս պատրիարքին, որ իւր խորհրդակիցներով գործեց, որքան հնար էր գործել, յօգուտ հարցին։ Այսուհետ մենք առաջ ենք բերում նորա Կ. Պոլսոյ ազգային ժողովին տուած հաշուի այն մասն, որ վերաբերում է նրան, թէ ինչպես Նորին բարձր Սրբազնութիւնը վարել է հայոց հարցն և ինչ կէսին այն հասցրել քաղաքականութեան առաջ։

Ս. ԳԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան կայսերութիւնը գեսպանաժողովին (Կ. Պոլսոյ) որոշումը չընդունեց. և մեք Հայքս պատճառ չունէինք որ դժգոհէինք տեսնելով որ Բ. Դուռը կը մերժէր բացարիկ ու մասնաւոր չնորհումներ ու բարեկարգութիւնք, որոց արդիւնքը պիտի ըլլար մանաւանդ աւելի գառնացումն մեր վիճակին, դի տուրքերն աւելի մեր վերայ պիտի ծանրանային, ինչպես նաև այն տարերքն որոցմով կը բաղկանայ յոռին այս երկրին կառավարութեան մէջ։ Այլ մեծագոյն չարիք մ'ու ազգաբ փըրթաւ ընդհանուր երկրին վրայ—պատերազմը։ Օսմանեան կայսերութիւնն այս մեծ պատերազմէն առաջ իր զօրութիւնը գործածած էր Հէրսէք—Պոսնայի և Պուլղարիոյ ապստամբութեանց դէմ և կառնուար պատերազմ մղելով երկու իշխանութեանց հետ Գարատաղի և Սերպիոյ՝ որոց օգնութեան կը պանար ինչ որ պաշտօնական կերպարանք չունենալով Պարտ էր, իլլութիւն դատապարտած էր անոնց զէնքերը։ Հասկ ապա Պուլկարիոյ արգասաւոր դաշտերը, և աւազ, մեր այնքան ազգայնոց արեամբն ու քրտինքովն ողողել մեր Հայաստանի օրհնեալ դաշտերը, անթիւակուռ արհեստին քանդմանցն ու արհաւարց տեսարան եղան։

Օսմանեան ազգը իւր ցեղին յատուկ բնազդովն ոգեորած՝ պահ մը եռ մղեց անպարի թշնամին և յապաւ կրթեց զայնարհ իր արիական զիմադրութեամբ, ու վերջապես տեղի տուաւ աւելի մեծ զօրութեան առջև, և Ռուսիոյ յաղթական բանակները մէկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն Կարս, և միւս կողմէն մինչև բոլոր Թուրքիոյ մայրաքաղաքն ի Պոլիս. ժամը հնչեց խաղաղութեան։ Երկու տէրութեանց բանակցութիւնն սկսաւ Բերլինի մէջ և ընդհանուր պայմանները կանգնան յԱդրիանուպոլիս։ Անմիջապէս պիտի սկսէր դաշնադրութեան բանակցութիւնը։

Ոչ ոք կարող է բուռն զօրութեան դէմ, մանաւանդ երբ բարոյական զօրութիւն միայն ունի և ոչ ալ ըլլայ չկըրնար փոխել եղելութեանց ընթացքը։ Մեծ խելք և մեծ հեռատեսութիւն պէտք չէր տեսնելու համար թէ երկրին վիճակը կը փոխուէր բոլորովին, և անոր հետ նաև անձնիւր քրիստոնեայ ժողովուրդի դոյութեան պայմանները ալ կը փոխուէր։ Մէկ խօսքով վտանգն ակներև էր ինձի համար և ամենուն համար, որ Հայոց ազգն պիտի կրնար անհետանալ իբր ինքնուրոյն ժողովուրդ. և եթէ իւր դոյութիւնը չամրապնդէր, պիտի ոչընչանար— Հարատևարութեան խնդրոյն կապակցութեամբ մեծ քան զայն խնդիր, ազգին գոյութեան ու չգոյութեան խնդիրը։

Այլ ընդհանուր պայմանաց մէջ Հայոց ազգին անունն անգամ չկար և դաշնագրութեան վիճաբանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ։ Գրեթէ յուսահատելու էր և ես չգիտեմ թէ ինչպես չյուսահատեցանք։ Անկարելի է նկարագրել ազգին մարմոքը՝ զոր թողէք ըսեմ, զգացի ի սիրտս և ի բովանդակ անձն իմ. միանգամայն զգացի աՀեղն այն պատասխանատուութիւնն՝ որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վրաս, զի ազգը իւր երեցփոխանական ժողովոյը ազգին խնդիրն ինձի էր յանձնած մասնաւորապէս։ Յայղպիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը նեղելի էր։ Կրնայի ի ժողով կոչել զՀեզ, և այն ատեն բան մը չընելով ալ ձեր առջև պատասխանատուութենէ ազատիլ. կրնայի գոնէ Քաղաքական ժողովով գործել։ Պէտք էր որ այնպիսի պարագայի մէջ Նայէի միայն անձնական պատասխանատուութեանց ու ձեր առջև անպարտ երևնելով, խղճիս առջև պարտաւոր մնայի։

Տեսնելը երեսփոխանաց, անչուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէն այն օրերուն յիշատակը. Օսմանեան ազգը որ առատապես հեղած էր իր արիւնն ի պաշտպանութեանց, այնքան զոհողութիւններէ եաքը իր պարտութիւնը տեսնելով, և այսքան չարեաց սկզբնատպատճառ Քրիստոնէութեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի զրգռութիւն մը զգար։ Աւելի քան երբէք պէտք էր խոհեմութեամբ ու չրջահայեցութեամբ գործել. այլ նաև ուժով և ազդու կերպով գործել։ Ձեր պատրիարգը մտածեց, խորհրդակցեաւ իր չորքը ունէր բոլոր եպիսկոպոսական դասը պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին և յանուն ազգին զոհուելու եթէ պէտք ըլլար։ Միացաւ իր սրբազան եղբարց հետ՝ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երդուեալ էին, նորէն երդուան նուիրել զանձինս ազգին, բարիք նիւթ յուսալով որ այս հանգամանքը պիտի բերէ դարման Հայաստանի վերայ։ Նոյնպէս և Ռամկահայաստանի միւս ազգային և եւրոպական նահանգներում հարարաւոր ընտանիքներ ցրուած կենում են ապրուստի և կարօտութեան մէջ, մինչդեռ նոյա քրանիքը կարող էր առատել Հայաստանի խոպանացած հողն և սրան առատօրէն պարարիրել, թէ իրանց և թէ այլոց հարստութեան համար, ինչպէս են նոքա օտարութեան մէջ սովամահ լինում։ Ապագայի պատրաստութեան համար մեր Ռամկաբնակ եղբարք այժմ իսկ պէտք է սկսեն գաղթել ոչ թէ Հայաստանից, այլ դէպի Հայաստան Ռամկահայաստանի ամեն նահանգներից։ Թող սորա համար կազմվի մի մեծ ընկերութիւն և սա նպաստէ Հայերի գարձին դէպի իրանց հայրենի երկիրը։ Ա-մենուրեք բաւական մեծ գումար է ծախվում գաղթականների և ապրանների պահպանութեան համար, ինչպէս այդ գումարները գործ չդնվին Ռամկահայաստան գաղթողների համար և սոցա անտեսութիւնը կարգաւորելու համար Հայաստանի մէջ։ Տարակոյս չկայ, որ այս գործին շատ կ'նպաստեն և՛ Ռուսահայաստանի Հայերն, որոնք իւրաքանչիւր տարի բաւական մեծ գումարներ են ղրկում Ռամկահայաստանից [illegible] բայ, իրրև մանաւոր ողորմութիւն, որ ոչ մի նպատակ չէ ունենում ընդհանրութեան համար։ Եւ այսպիսի ողորմածութիւնն ոչ թէ միայն թոյլատուութիւն այլ և նպաստ և յորդոր է գտնում Ռուսահայ կառավարութեան կողմից յօգուտ Ռամկահայաստանի քրիստոնէից։ Այսպիսի մի "գաղթականութեան ընկերութիւնը" կարող է մի կողմից Ռամկահայաստանի Հայերի թիւը բազմացնել և նոցա անտեսութիւնը կարգաւորել Հայաստանի հողի մշակութեան համար. իսկ միւս կողմից օտար մեծ և մայր քաղաքներում թափառող և աղքատութեամբ իրանց բոլոր կեանքը անցնող Հայ ուսուցիչներն էլ Թո'ղ բարեհաճին իրանց աշխատանքը թափելու Հայաստանի մտաւոր անդաստանի վերայ։

Անգլիացին շահասէր է. նա որ ոսք է դրել Փորր Աֆրիկա, պէտք է անչուշտ ձանապարհներ շինէ և այդ երկրի հարստութիւնն իւր գումարով և աշխատանքով ձեռք բերել աշխատէ. ինչո՞ւ Հայ գումարատէրը պիտի թողնէ Անգլիացուն իւր հայրենիքի հարստութիւնը գրաւելու, ինչո՞ւ նա էլ իւր գումարը Հայաստանի մէջ գործ չդնէ։ Երբ այսպէս Ռամկահայերի մարդիկ որ, մտաւոր և նիւթական ոյժերը ղնուած կգտնվին Ռամկահայաստանի մէջ և նորա մշակութեան համար— մի խօսքով եթէ նոքա իրանց հայրենիքը կշինեն Հայութեան ճանրութեան կենդրոն—նոքա կունենան ապագայ, ապա թէ ոչ միշտ միայն յուսով կ'ապրին և վերջը անյոյս կ'կորչին։ Այսպիսի մի բարեգործական ընկերութեան համար և Հայ եկեղեցին չեմ պղծած մի գանձանակ պրպտելու, որ ստորագրեալ աւելը նուէր կը ստանայ Հայ ժողովրդից ամենուրեք քան որ և է տուի, որ պատճենում են Հայ եկեղեցիներում։

Գիտեմ շատերը պէտք է ասեն կամ մտածեն. թէ մենք չենք մտածել Քրդերի, Չերքէզների և այլոց վերայ, որոնք անապահով են անում կեանքը Ռամկահայաստանի մէջ և արգելք վերոյիշեալ գործունէութեան։ Մենք այդ խօսքերը միայն ծոյ-

Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղևորած յԱնգրիանուպոլիս, ևս ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք։ Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուզեցինք. այն է Հայոց յիշատակութիւնը դաշնադրութեան մէջ. և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւնն ևդաւ մասնաւոր յօգուտածով մը։ Արդեօք ճիշդ մեր ուղածին պէս հզօր յիշատակութիւնը.— ոչ. այլ քաղաքականութեան մէջ՝ «երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընել ինչ որ կրնաս»։

Ա.ռասիկ Ա.յ—Սանֆասնոյի դաշնադրութեան 16-դ յօդուածը։

«Նկատելով որ Ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած բայց Թուրքիոյ վերադարձնելիք տեղերէն մնկնիկը՝ կրնայ կռիւներու և երկու տէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներու պատճառ տալ. Դուռը պարտաւորութիւն յանձն կառնու Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարեփոխութիւնները ու բարենորոգումներ առանց այլ ևս ձգձգելու գործադրել, և Քիւրդերուն ու Չերքէզներուն դէմ անոնց ապահովութիւնն ապահովելու»։

Այս յօդուածին ուժովը Քիւրդերուն՝ Չերքէզներուն հարստահարութեանց դէմ ապահովված էին Հայք. իրենց տասը տարիէ ի վեր արձակած ազդակը վերջապէս արձագանգ կը գտնէր ու մեր յանուն ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուէր ըստ սկզբան՝ և համազգային իրաւանց կարգին մէջ կը մտնէր։ Այլ մեր ազգային խնդիրը Արևելեան ընդհանուր խնդրոյն հետ նոր կերպարանք ու նշանակութիւն առած էր։

Այս երկիրը մինչև այսօր կառավարեցաւ Տաճ[illegible] պաշտօնատարաց ձեռքով և այսօր հաստարակ եղած ճշմարտութիւն մ' է պաշտօնատարց յոռութիւնը. այնպէս զի Նոյն իսկ Բ. Դուռը և երկրին վճռապետը քանիցս հռչակեցին զայն։ Արդ ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Հայաստանի համար թէ Հայ ժողովուրդին պատուհասը Քիւրդերն են միայն ու Չերքեզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են։ Այս պաշտօնատարաց մէջ Հայաստանի մկ ծայրէն մինչև միւս ծայրը գրեթէ և ոչ մկ Հայ պաշտօնատար մը կայ։

Պատերազմէն առաջ մեր վճռապետ ինքնակալը, այս մեծատարած կայսրութեան միահեծան տէր, սահմանադրութեամբ և հաստատութեան սկզբունքով փորձեց լուծել Արևելեան խնդիրը, երբոր խորութիւնը վերցնելով քաղաքական ու վարչական խնդիրներու մէջ ու տէրութեան պաշտօնները հաստատապէս բաշխելով իր ամեն կարգի հպատակաց, և որոնց մէջ մկ հատիկ խորութիւն մը ընդունելով այն, որ իւրաքանչիւրին կարողութենէն ու անձնական արժանիքէն կը ծագի։ Հայց ազգը ոչ զըժկամակ ոչ ըմբռոստ գտնվեցաւ այս հայրենասիրական վերջին Չանից. նա մանաւանդ քանի քանի իր զաւակունքը ինքգինքնին նուիրեցին գործին յաջողութեան. ինչպէս. վասն զի տեսան որ փառաւոր դիր մը պահուած էր Հայոն խնդրոյն այդ եղանակ լուծմանը մէջ. վասն զի Հայը՝ ինքնուրոյն եկեղեցիովը ու ինքնուրոյն ազգութեամբը, որ չէ խառնուած ոչ օտար եկեղեցիի մը հետ և ոչ օտար ազգի մը հետ, ամենէն աւելի կրնար անվտանգ եռանդով աշխատիլ երկրին վերածնութեանը համար. և առանց չնչին զլխաւոր գործաւորներէն մէկն ըլլալ, այլ կամարձակութիւնք ըսել՝ գլխաւոր գործաւորն ըլլալ, համակերպելով նաև Աստուծմէ իրեն մեծանշորհեալ բնական տուրքովը պարագայից բերմանցն ու այլ և այլ ազգաց այլ և այլ բնաւորութեանցն ու բարոյից։ Դեղեցիկ

№ 33 ՇԱԲԱԹ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՎԱՂՎԱՆ ՊԱՏԿԱՆԱՎՈՐ ԹԵՐԹԻ 1878 Թ. ՀՈՒՆԻՍԻ 1

ՊՈՂՈՍ ՀԱՅՈՑ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԸ

Ի ՎԱՂՎԱՆ

ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏԿԱՆԱՎՈՐ ԹԵՐԹԻ

1878

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՑ

ՎԱՂՈՒԿՈՒՄ Հ ԱՅՑԱՍՏԱՆԻ ՎԱՍՆԳ ԹԵՐԹ 9 ՀՈՒՆՎԱՐԻ ՀԱՄԱՐ 1878 Թ. ԱՐԱՐ 35

ԳՈՏԱՑՈՒՆ ՀԱՅ

Ազատ խոսք։

Ս. Ա. փաստաբան «ՊՐՈՑԵՍ ԱՆՑՍՆՈՒՄՆ»
(Ֆրանսիացի դատավարական հետաքրքրական գործ)

Ի ՄԱՐՏԻ

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

նելու: Դորանով պարագաները, հասկանալի է, որ փոխվում են, բայց Նուբար փաշան կարծում է, իբր խօսակցութեանց մէջ նորա վերայ հաստատ ենալու, որ փոքր Ասիայի արգասաբեր ամման համար պէտք են կանոնաւոր ոստիկանութիւն, անաչառ դատաստան, արդարացի հարկապահանջութիւն և մշտական պաշտպանութիւն թէ փաշաների հարստահարութեանց և թէ արտաքին թշնամիների դէմ: Բանի յիշատփոխութիւններ, որ ժողովրդի ոգուն դէմ են և հիւպատոսներ զանազան քաղաքներում Հնդիկաստանի պէս համարում է նա մի ցաւ, որից Անգլիան պիտի ղզուշանայ: Բայց աւելի մեծ կշիռ է տալի հարկերի կանոնաւորելուն և ոստիկանութեան ու դատաստանական բարձրագոյն պաշտօնները Անգլիացւոց յանձնելուն:

Թէ մինչև ո՞ր աստիճան Նուբար փաշայի խորհուրդը Անգլիական նախարարների օրոշմանց վերայ ներգործեց, թէ որքանով նա նոցա նախկին գաղափարները հաստատեց, փոփոխեց թէ նոցա այլ ուղղութիւն տուաւ, դժուար է ասել: Այսքան կարելի է արդէն այժմ իմանալ, որ Էկսյարդի ձեռնարկած միջոցները նորան գլխաւորապէս համապատասխանում են: Էկսյարդի պահանջածը Սուլթանից այն չէ, որ նա իւր իրաւասութիւնը փոքր Ասիայի վերայ մի կողմ թողնէ, համաձայնի տալով, ինչպէս Հնդկական օրինաւոր իշխանները, իւր Ասիական նահանգներում Անգլիայի հիւպատոս նատելուն, կամ Անգլիայի հարկահաններ, դատաստանական և ոստիկանութեան պաշտօնեաներ կարգելուն ըստ լոկ քմայ Լօնդոնի կառավարութեան. ոչ, ինչ որ նորանից պահանջում են է ըստ Նորդկոթի յատուկ խօսքերի. "իրաւացի հարկատուութեան կարգ, պիտանի և հաւատարիմ ոստիկանութիւն և անկաշառելի դատաւորներ»: Առանց սոցա փոքր Ասիան բոլորովին անկարող է օրինաւորապէս ծաղկելու և արտաքին ու ներքին յարձակմանց դիմադրելու: Բայց որովհետև, ինչպէս հեռանքը ցոյց տուաւ, կ. Պօլսի կառավարութիւնը հակառակ իւր յաճախ տուած խոստմանց և թերևս ազնուական կերպով արած սկզբներին, մինչև այժմ անկարող եղաւ իւր սեպհական ուժով գոնէ միայն մէկը այն բարեկարգութիւններից յարմար և հնարաւոր կերպով գլուխ բերելու, ուստի այժմ Անգլիան առաջարկում է նորան բանիմաց, իւր և Հնդկաստանի կառավարութեան մէջ փորձուած անձինք, որ դոքա ոչ թէ միայն հարկերի, ոստիկանութեան և դատարանների կազմակերպութեան մէջ իրան օգնեն, այլ և դոցա անընդհատ գործադրելու վերայ հսկեն: Այժ Անգլիացի պաշտօնեաները պիտի ընտրուին Անգլիական կառավարութիւնից, Սուլթանից հաստատուին և հնան այս վերջնի իրաւասութեան տակ և ապրին նորա տուած ռոճկով, առանց բնաւ ընդունելու:

Սոքա, ինչպէս ամեն մարդ կհասկանայ, չափազանցութեան եղրակացութիւններ չեն: Սոքա չեն դիպչում ոչ Սուլթանի միապետական իրաւանց և ոչ նորա մի որ և է տէրութեան հետ կապած դաշինքին: Սոքա Տաճկաստանին այնպիսի բան չեն առաջարկում, ինչ որ նորա հաւատին և նորա մահմետական բնակիչների զգացմանց հակառակ է: Սոքա բովանդակում են միայն այն, ինչ որ ամեն մարդ, իրրև հեռաւոր վերջին արիւնահեղ պատերազմի, ի բոլոր սրտէ պիտի ցանկանայ, այսինքն նախապայմաններ այնպիսի մի երկրի արմնաւոր և ապատ զարգացման համար, որ բնութիւնից օրհնուած է, բայց երկար ժամանակներ ազահ պրոյեկների և անխիղճ փաշաների ձեռքով խազաղ կեանքի և զարգացման շնորհքէն զուրկ է մնացել: Եւրոպան առանց նախանձի յաջողութիւն կմաղթէ Անգլիային, եթէ նորան յաջողի այս ձեռնարկութեամբ աշխարհքի ամենաիսաւար երկրներից մէկը տիրմէն հանելու, և այն բանալու եւրոպական բան և ոչ երևութական լուսաորութեան առաջ և դորանով անդուծանելի թուսլ արևելեան հարցը իւր վերջնական լուծման բանալին մատուցնելու:

Բայց Բարձրագոյն Դռնէը և Սուլթանը: Ինչ որ մինչև այժմ անգլիական առաջարկութիւնների մերժուելու մասին պատմում են. գատարկաբանութիւն է, դորա հակառակն է ճշմարիտը: Սուլթանը բրիտանական դեսպանին քանիցս շեշտելով յայտնել է իւր պատրաստակամութիւնը պաշինքի պայմաններին հետևելու և լսա կարելոյն աշխատելու անգլիական օգնութեամբ իւր փոքր Ասիական նահանգներին մի նպատակայարմար կառավարութիւն տալու: Նա պատրաստ է այդ հողերի խազմակերպութիւնը Անգլիացւոց յանձնելու ու նորա զործադրութիւնն էլ Անգլիացի և Տաճիկ պաշտօնատարներին աւանդելու, նա պատրաստ է յայտնում իրան, ինչպես Եգիպտը, Ասիական կառավարութեան տէր արևմտեան եւրոպայի կառավարութեան եղանակը փորձելու: Կարծ, նա յայտնում է ըստ սովորութեան այժմեան բոլոր կառավարութեանց, որ ինքը այդ առաջարկութեանց "հիմունք իւ հետ համաձայն է.

Բայց մի իրականութիւն թուում է թէ Նրան այդ համաձայնութեան հետ հոգս է պատճառում, այսինքն թէ նա պրատիզից պիտի այդքան դրամ առնէ, այդ յանկալի բարեկարգութիւնները մտցնելու և Անգլիայի Թանկագին օգնականների օգնականները» վարձատրելու համար:

Կամք ունիմ, ասում է. բայց փող: Այս և այլ ձևով մի քանի անգամ հաւանցի հասկացուեցաւ. Էկսյարդին բանի հետևութիւնը և ամենամած երեսով խօսք եղաւ մի անգլիական փոխատուութեան անհրաժեշտ կարևորութեան վերայ: Սորա նուաճ է կայանում գործի ճշմարտութիւնն ու ծանրամասը: Անգլիացիք թոյլ տուին իրանց կիպրոսը գրաւելու. և այն մեծ պատասխանատուութիւնը, որ ընկնում է նոցա վերայ փոքր Ասիայի գայկութիւնը յանձն առնելով, կարող են իրանց հետ ժուկու բնութեամբ և լայն թիկունքով առնել մեծ նեղութեան կրել, բայց վոլ տալ, փող Տաճկաստանին, որ մինչև այժմ այնքան Անգլիական միլիոններ է ընկղմել իւր մէջ, դժուար է: Բիկոնսֆիլդը դժուարաւ կարող է իւր հայրենակիցները, որ ուրիշ անգամ իւր վրան շատ հիանում են, այդ բանի համար գրաւել: «Բնաւ, ոչ մի ժամանակ» գոչում էր փոքր ժամանակ առաջ Times —ը, երբ որ Անգլիայի հոգմին ապահովելի Տաճկական փոխառութեան լուրը տարածուեցաւ: «Բնաւ, ոչ մի ժամանակ»—ը չափազանց է և կարելի է ասել, առանց մտածելու ասած խօսք, որովհետև չէջ—բայից սկսած շատ բան պատահեցաւ, որ քրիստոնեայ և մահմետական փիլիսոփաները բնաւ և ոչ մի ժամանակ կարելի չը պիտի համարէին: Բայց հանգամանքներին նայելով Տաճկաստանի խնդրած փոխառութիւնը կարելութեան սահմանին մօտ է, թէև ոչ այնպես անպայման, ինչպես գրիմի պատերազմից յետոյ, բայց աւելի հաձելի ձևով: Ինչպես յայտնի է Անգլիան պարտաւոր է ըստ պայմանագրութեան Կիպրոսի եկամուտների աւելորդը, մօտ 130,000 ֆ. տարէկնդ տարէն, Տաճկաց տերութեանը տալու: Ինչպես կլինէր, եթէ Անգլիան իրաւունք տանար այդ գումարը պահելու իրրև շահ 4—5 միլիոնի չափ գումարի փոխատուութեան, որը միայն փոքր Ասիայի բարեկարգութեանց համար պիտի գործ ածուէր: Դորանով այն փոխատուութիւնը տապահոված կլինի, Սուլթանն, իր փողը կատանայ, որի պահատութիւնը միայն, ինչպես ասում է, իրան խոչընդոտ է լինում ցանկացած բարեկարգութիւնները մտցնելու և Բիկոնսֆիլդի հակառակորդներն էլ իրաւունք չեն ունենալու գանգատներ անելու, որ նա մատղիր է քրիստոնեայ Անգղիացւոց դրամները ջրհատանայ ցամիկների անյատակ անդունդը թափելու:

Սորանով չեմինք ասել, որ արդէն մի այդպիսի գրամական նախագիծ հաստատացած պատրաստ է, բայց այսքանս կարելի է ասել, որ բանին տեղեակ շրջաններում այդ մասին յանձախ խօսք է լինում և գանազան գրամատանց հետ քնքոյշ յարաբերութիւններ սկսած են: Դոցա հետևանքից, կամ թերևս աւելի ճիշտն է, Սուլթանի անդղեական պայմանները ընդունելու ոչ ատելութեան պատրաստակամութիւնից, կախուած կլինին այն առաջին քայլերը, որ Անգղիացիք պիտի անեն յօգուտ իւրեանց խնամակալութեան փոքր Ասիայի վերայ:

Գ. Ա.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Պ. Մակ—կոնը «Fraserrs Magazin» տեսրում Ասիական Տաճկաստանի ազգերի կոծի վերայ խօսելից յետ, այդ երկրի բոլոր բազմազեղ բնակիչների թիւը աւելի հաւանական համարում է ընդունել 16,500,000. Գլխաւոր ազգութիւնքն են. Տաճիկ—10,000,000, Հայ—2,000,000, Քուրդ—1,250,000, Յոյն—1000000 Ասորի— 1,000,000, Արաբ— 700.000, Չերքէզ—350,000, Թիւրքման— 90,000, Հրէայ—60,000. Թաթար, Բոշայ և այլ— 50,000 բոլորը— 16,500,000.

Ապա պ. Մակ—կոնը քննում է իւրաքանչիւր ազգաչունութեան բնակութեան տեղը, պարագմունքն ու նշանակութիւնը տէրութեան մէջ. Մենք այստեղ առաջ կբերենք նորա նկատողութիւնքը Հայերի մասին. Ահա նորա խօսքերը:

«Իրանց թուով և նշանակութեամբ Տաճիկներից յետ երկրորդ տեղն ունին Հայերը: Երբայեցւոց նման նոքա ցրված են բոլոր աշխարհումս, ցրուում են ամեն ազգերի մէջ. միայն չեն խառնուում և ձուլուում նոցա մէջ. Նոքա անյողդող են իւրեանց նախնեաց կրօնի մէջ և ծածուկ կրում են իրանց մէջ յոյս ազգային անկախութեան, որոյ համար յայտնի բան է, նոքա ունին աւելի ընդունակութիւն քան որ և է Տաճկահպատակ քրիստոնեայ ազգ. Հայերից աւելի ազդեցութիւն ունեցողներն են սեղանաւորներն, իրանց հարստութեան և փառներին աւելի մօտիկ լինելու չնորհիւ. Նոքա պատասխանատու են չատ վարչական չարագործութեանց համար, որ վերաբերում են ոչ միայն նոցա ազգի հասարակութեանց, այլ և ընդհանրապէս բնակչաց բոլոր դասերին. Բոլոր Հայոց թիւն ընդունելում է մօտ 4000,000 որոնցից մօտ երկու միլիոնը բնակում է ասիական Տաճկաստանում, 450,000 կ. Պօլսում և Ռումելիասում, մի միլիոն Ռուսաստանում, 400 հազար (?) Պարսկաստանում, 40,000 (?) Հնդկաստանում և Ասիական կղզիների վերայ. 25 հազար Աւստրիասում, Իտալիասում, Հոլլանդիասում. իսկ մնացածները ցրված են միւս երկիրներում. Ասիական նահանգներում Հայոց ազգի մեծ մասը չարունակում է քնակվել իւր նախնեաց երկրում, Արարատի սրբազան չրջակայքում. իսկ Էրզրումի, Վանի և Դիարբեքրի երեք ընդարձակ վիլայէթներում Հայերը կազմում են մեծամասնութիւն Տաճիկների հետ համեմատելով. Հին դարերում նոքա երևելի էին իրանց քաջութեամբ և պատերազմասիրութեամբ. իսկ ներկայումս նշանաւոր են իրանց խաղաղասէր բնաւորութեամբ և հպատակութեամբ այն կառավարութեան, որոյ երկիրներում նոքա բնակում են. Նոցա ազգային ընտիր յատկութիւններն աւելի մնացել են գիւղական, քան քաղաքական Հայերի մէջ»:

—

Աղեքսանդրիայի պաշտօնական լրագրում օգոստոսի 30-ին հրատարակած էր, որ Եգիպտոսի փոխարքան յանուն Նուբար փաշայի տուել է հրովարտակ, որ վերաբերում է Եգիպտոսի վարչութեան յեղափոխութեան. Հրովարտակի մէջ փոխարքան յայտնում է, որ այսուհետև կկառավարվէ երկիրը միայն նախարարների գործակցութեամբ և նոցա խորհրդի միջնորդութեամբ: Որոշված են հրովարտակում նախարարների գործունէութեան և լիխանութեան սահմանը. նոքա պատասխանատու են Նոր նախարարութիւնը կազմում են նախարարաց խորհրդի նախագահ և արտաքին գործոց ու արդարութեան նախարար Նուբար փաշան, ներքին գործոց նախարար— Ռիազ փաշան և ֆինանսական նախարար—Ռատիբ փաշան: Իւր չջարերականում Նուբար փաշան յայտնում է, որ ևլևմից նախարարի պաշտօնը չուտով կընդունի մի անձն, որ վայելում է հասարակայ յարգանքն ու հաւատարմութիւնը:

—

Պ. Միրզայան Յովհաննիսեանց հաղորդում է, որ Բիւվար փիւղ Հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ստացել է յօգուտ նոյն դպրոցի նկատերինոդարի բարեկրօն Մ'լիքեանց քահանայից 50 ռուբլի, որ նորին հայրութիւնը բարեհաճել է ժողովել իւր ժողովրդոց մէջ.

Նոյն դպրոցին նուիրել է Бакинскія Извѣстія լրագրի խմբագիր ծած. պ. Գուլիշամբարեանցը զանազան դպրոցական առարկաներ. իսկ դպրոցի հոգաբարձ. պ. Յ. Իզմրաչեանցը նուիրել է նոյն դպրոցին «Մանկավարժական Թերթի» մի ամեայ համարները.

Սոցա համար Բիւվարի դպրոցի հոգաբարձութիւնը պարագ է համարում բոլորեցուն իւր խորին շնորհակալութիւնը յայտնելու.

—

Լրագիրները հաղորդում են, որ Միդհատ փաշան իրաւունք է ստացել Սուլթանից վերադառնալու կ. Պոլիս: Ասում են միջնորդողը անգղիական կառավարութիւն է որ ներկայումս յեղափոխութեանց միջոցին օգտաւէտ և կարևոր է համարում Միդհատ փաշային, որ անտարակոյս իւր գործից յետ կատանայ բարձր պաշտօն:

—

Արտաքինում և Օլտիում բացվել են Ռուսաց հետագրական կայարաններ.

—

Առաջին փոխատուութեան տոմսակների վճարկախաղատութեան ժամանակ տանող տոմսակների ցուցակ.

Տոմս. №	Սէրի №	Գումարը
6,439	33	200,000
1,536	28	75,000
13,316	11	40,000
2,585	47	25,000
3,549	41	
16,631	40	10,000
2,198	32	
18,636	47	
7,931	22	
5,738	5	8,000
18,504	30	
7,609	4	
6,879	33	
1,308	34	
15,310	20	
10,062	14	5,000
4,072	16	
10,717	34	
8,015	18	
939	27	
7,204	30	
12,904	31	
19,031	26	
11,810	10	
12,050	15	
8,205	29	
11,687	35	
1,658	30	
17,833	49	
18.602	34	1,000
11.657	5	
6,162	11	
6,128	38	
1.516	12	
17,190	13	
2,266	37	
18,152	3	
14,474	33	
2,599	14	
3,775	27	

Թ ա ր գ մ ա ն ի չ Պ. ԱԲՄԵՕՆԵԱՆՑ
Հ ր ա տ ա ր ա կ ի չ Հ. ԵՆՓԻԱՋԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՔԱ.

"ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ"

ԱՄՍԱԳԻՐ

Հրատարակվում է ամիսը մէկ անգամ առանձին գրքոյկներով, իւրաքանչիւրը 4—6 թերթ:

Տարեկան գինն է 6 ռ. աւելորդ տեղ:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція Армянскаго Журнала "ПЕДАГОГИЧЕСКІЙ ЛИСТОКЪ,,. Солодаки, Содовая удица д. № 42

Քաղաքիս մէջ ստորագրվել կարելի է՝ պ. Զ. Գրիգորեանցի և "Կենդրոնական,, գրավաճառանոցներում, նոյնպէս պ. պ. Աբովեանց եղբարց խանութում Միքայէլեան կամուրջի վերայ:

"ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹԻ,, յուլիս և օգոստոս ամիսների գրքոյկները (№ 1 և № 2) լոյս տեսան. հրատարակութեան նպատակը, ծրագրութիւնն և պրոգրամը կաղրող են ցանկացողները գտնել այդ գրքոյկների մէջ:

Խմբագիր Յակոբ Տէր—Յովհաննիսեանց

Մամուլի տակից դուրս եկան Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

1) Նահապետական և Հայրենի աչխարհ, երրորդ տպրուսյ Ուսմունք և Ընթերցմունք: Գինն է 65 կ.:

2) Համառօտ մանկավարժութիւն: Գինն է 1 ռ. 50 կ.:

Մանուար ազգայց պօրդիմնազիան այսու յայտնում է, որ ընդունելութիւնը նորակ մանուկների սկսուել է օգոստոսի 22-իյ իսկ ուսումն սեպտեմբերի 2-ին: Պրոգիմնազիայում սեպտեմբերի 1-իյ բացուել է 4 հասարակ դասատուն: Պրոգիմնազիան գանվում է Նազարի փողոցում Շիրազի տանը:

Հիմնագիր Մ. Մանդինեանց.

Շատով լոյս կ'տեսնի «Թուրքանական խնդիրների ժողովածու, գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար. I մասն. աշխատասիրութիւն, ձևաբանութիւն և Պատմութիւն եղանակով, Բագրատայ Միրիմանեանց:

Կ'ծախվի Զ. Գրիգորեանցի գրախանութում:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 9-го СЕНТЯБРЯ 1878 г. Типографія А. Энфіаджіанца и К° Տուն Թժշկապետ Մ. Ռօտինեանց